

**«Օրը շաբաթ է, լուսինը մեկ օրական» դիցույթը
Լ. Խեչոյանի «Խնկի ծառեր» վիպակում**

Այվազյան Թինա

Հանգուցային բառեր. դիցանուն, դիցական արտահայտություն, Փոքր Մհեր, դիցաբանական բովանդակություն, Սասնա Շոեր, աստղաբաշխություն, բանահյուսություն

Նախաբան

Լևոն Խեչոյանի «Խնկի ծառեր» վիպակը լույսընծայումից մինչ օրս գրականագետների, ընթերցող հանրության հետաքրքրության կենտրոնում է: Վիպակին անդրադարձել են հայ և օտարագրի գրականագետներ Ս. Աբրահամյանը [2, 45], Վ. Եփրեմյանը [11, 68], Ա. Բեքմեզյանը [8, 84], Կ. Գաբրիելյանը [9, 207], Վ. Փիլոյանը [26, 157], Գ. Աբելյանը [6], Վ. Գրիգորյանը [10, 86], Բ. Պաստուխը [23], Ի. Ռյաբչին [24], Յ. Կովալը [18], Ա. Դրոզդան [13], Ժ. Կույավան [20], Ի. Կոտիկը [19], Ն. Յացենկոն [22]:

Խեչոյանական արձակի դիցաբանական ակունքը, հնագույն հավատիլիքների և ժողովրդական բանահյուսության հետ ունեցած սերտ կապն արդեն նկատելի էին նրա ստեղծագործական կյանքի սկիզբն ազդարարող «Խնկի ծառեր» ժողովածուում և համանուն վիպակում: Ուկրաինացի գրականագետ Բոգդան Պաստուխը, անդրադառնալով Լևոն Խեչոյանի ստեղծագործությանը, գրում է. «Լևոն Խեչոյանի արձակի ոճի ակունքները ժողովրդաագագրական և միջական-բանաստեղծական հարթության մեջ են, որտեղ կինն ունի դաշտային ծաղիկների բույր, արևածաղկի գեղեցկություն» [23]: «Խնկի ծառեր» վիպակի առասպելաբանահյուսական նախահենքը ևս աննկատ չի մնացել: Այն ընդգծել են վիպակն ուսումնասիրած գրեթե բոլոր գրականագետները. «Միջակառուցման բացառիկ նմուշ կարող է հանդիսանալ Լևոն Խեչոյանի «Խնկի ծառեր» վիպակը, որը հիմնված է դասական միջերի համակարգված սիմվոլիկայի ենթաշերտային կիրառման սկզբունքի հիման վրա» [8, 84], «Լևոն Խեչոյանի «Խնկի ծառեր» վիպակը միջական սինկրետիզմի, տարակերպ ու տարաբնույթ միջերի մեկտեղման արտահայտություն է, ուր տեսնում ենք ամենատարբեր միջերի (համաշխարհային, լատինաամերիկյան, բիրլիական...), անգամ հեքիաթի («Մերոբը ծոցն ու գրպանները սիսեռ է լցրել»...) հոգեկան գործունեության արդյունք անհատական միջաստեղծման և խորհրդային ժամանակների իրողությունների ձայնակարգություն:

Սրանք այնքան են սերտաճած, մեկտեղված, որ հաճախ հնարավոր չէ գատել իրարից, իսկ եթե ծագումնաբանորեն գատվում են, ապա կառույցի տեսակետից են մեկտեղ, ինչն էլ հուշում է, որ գործ ունենք յուրահատուկ միջակայքում ու գեղարվեստական մտածողության հետ՝ պատկերների, գույների, զգայնությունների, միջերի, ժամանակների մեկտեղմամբ» [26, 157-158], «Ստեղծագործությունը լի է միջակայքի տարրերով, որն էլ որոշ հարազատություն ունի մոգական ռեալիզմի արձակի հետ: Ընթերցելիս ես երբեմն զգում էի, որ այդ միջակայքի տարրերն ասես փոքր-ինչ ավելի լրջություն են հաղորդում կերպարներին, որոնք բախտի բերմամբ հայտնվել են դրամատիկ իրադարձությունների կենտրոնում» [19]:

Այնուամենայնիվ, վիպակի առասպելաբանահյուսական հիմքը կազմող դիցույթները համակողմանի դիցաբանական մեկնության չեն արժանացել և մեկնաբանման կարիք ունեն: Այս տեսակետից **արդիական** ենք համարում վիպակում տեղ գտած **«Օրը շաբաթ է, լուսինը մեկ օրական»** դիցույթի ուսումնասիրությունը, որին մինչ այժմ կա մեկ անդրադարձ [7]: Մեր **նպատակն է** վերոնշյալ դիցույթի դիցաբանական բովանդակության բացահայտում-մեկնաբանումը: Իրագործման համար առաջադրել ենք **հետևյալ խնդիրները՝** ուսումնասիրել **«Օրը շաբաթ է, լուսինը մեկ օրական»** դիցույթը վիպակում և հեղինակի ստեղծագործության մեջ եղած այլ դիցույթների (Օնան-Օհան-Մհեր դիցանուններ, ծանր բզեզ) փոխհարաբերությամբ, քննել դիցույթը առասպելաժխտական, աստղագիտական, աստղաբաշխական, այլբիմիական պատկերացումների համապատկերում: Հոդվածի **գիտական նորույթը «Օրը շաբաթ է, լուսինը մեկ օրական»** դիցույթի համակողմանի մեկնությունն է և դիցաբանական իմաստի վերծանումը: Առաջնորդվել ենք **միջաբնադասական հերմենևտիկայի մասնագիտական և վերլուծական** մեթոդաբանությամբ:

Դիցույթների փոխհարաբերությունը. Օնան-Օհան-Մհեր-ծանր բզեզ

Գրական ստեղծագործության հիմնական գաղափարի իրագործման նպատակով հաճախ թե «բաց», թե «փակ» ձևով բուն առասպելի փոխարեն կիրառվում են նրա առանձին **հիմնական տարրերը կամ թեմաները (մտտիվներ)** [34]՝ **դիցույթները (միջոլոգեմ)**, որոնք դրսևորվում են կերպարային համակարգում (մասնավորապես կերպարների անվանումներում), ինչպես նաև մեջբերումների, հղումների, ակնարկների, համեմատությունների և այլ ոճական հնարների տեսքով: «Խնկի ծառեր» վիպակը դիցույթների բարդ համադրություն է: Դրանք նույնիսկ գեղարվեստական փոխաձևմամբ չեն կորցրել առասպելական նշանակությունը և մատնում

են իրենց առասպելական ծագումը: Առասպելական տարրերը ներհյուսե-
լով վիպական իրականությանը՝ Լ. Խեչոյանը թափանցում է եղելություն-
ների խորքը՝ փիլիսոփայորեն վերաիմաստավորելով դրանք, խորացնե-
լով երկի գաղափարը: Թեև առանձին երկերի քննության ընթացքում գրա-
կանագետներն անդրադառնում են Լ. Խեչոյանի ստեղծագործության
առասպելական հենքին, բայց հաճախ հենց հեղինակն է բացահայտում
կամ մեկնաբանում իր ստեղծագործության մեջ եղած առասպելական
տարրերը: Հարցազրույցներից մեկում խոսելով «Խնկի ծառեր» վիպակի
մասին՝ Լ. Խեչոյանը նշում է. «...Սյնտեղ մի ես՝ մի հերոս կա, որ բոլոր
սերունդների հետ ապրում, ոչ մեռնում է, ոչ էլ ծերանում՝ ինչպես Ժամա-
նակը: Որ դիտենք, էպոսի Մհերը կերևա, թե արևամուտի մեջ ինչպես էր
մենամարտում Աստծո հրեշտակի հետ, իսկ քիչ հեռվում՝ ծփացող Վանա
լճի վրա, ձկնորսներն իրենց գործին, ծնկները նավակների կողերին
հենած՝ ուռկաններն էին նետում ալիքազարկ, ձերմակ ջրերը... Անգամ
Աստծո հրեշտակի հետ պատերազմելուց հետո, չպարտված փակվել էր
Ագռավաքարում, այնտեղ է՝ ՆԱ՝ Հայոց Ավետարանը» [16, 184]:

Չնայած հեղինակային այս դիտարկմանը, թե Մհերը մշտապես
ներկա է՝ որևէ դիցույթի «բաց» կիրառություն վիպակում չկա, փոխարենը
դիտարկելով վիպակի կերպարային համակարգը՝ նկատելի է *Օհանես*¹
(Օնես, Օնիկ, Օվանես, Օհաննա, սուրբ Հովհաննես), *Օնան*² (Հունան)
անվանումների և նրանց տարբերակների հաճախակի կիրառությունը: Սա
ուղղակիորեն հուշում է կերպարների՝ միննույն դիցից սերման մասին:
Նախ՝ նկատենք, որ Օհանես անունն իր դիցաբանական բովանդա-
կությամբ առնչվում է շումերաաքադական դիցաբանությունից հայտնի
ձկնակերպ Օան աստվածությանը: Մյուս կողմից՝ «Մասնա ծռեր» էպոսի
պատումներից մեկում՝ Սարալանջեցի Մկրտիչ Պետրոսյանի պատումում,
Ձենով Հովհանից բացի, վերոնշյալ անվամբ հիշատակվում է Փոքր Մհերը.

Մե քնի մ՝ տարի ընցավ,
Խանդութ խանըմ պառկավ,
Մե խատ տղա բերեց.
Անուն դրին Ովանես:
Մե քանի մ՝ տարի էլ ընցավ,
Դավիթն էլավ գնաց ման գալու [25, 702].

¹ Օհանես (Յովանէս) անունը ծագում է հունարենից և ստուգաբանվում է *հնագանդություն* [4, 537]:

² Օնան (Յովնան) անունը ծագում է եբրայերենից և ստուգաբանվում է *աղավնի* [4, 706]:

Մեկ այլ՝ քավառցի Սարգիս Հակոբյանի պատումում Փոքր Միերը որդի է ունենում *Հոհանես* անվամբ.

Հինգ տարուց հետո կռապաշտ թագավորներուց մեկն ուզեց սպանի Միերին ու պահանջեց ընդունո՞ճանչնա ուր իշխանութենը: Ես որ լսեց Միերն, բարկացավ ու վճռեց կոտորի աշխարհիս հըմմեն կռապաշտներուն: Հըմնուց առեջ ենի գնաց ուր ես թշնամու դեմ ու մե որվա մեջ վոչնչացուց ընդոր: Գոհարն ես որերուն երկու հոգով եր: Յեփ Միերն դպա մեկել թշնամիներն գնաց, ըսեց.

— Թե որ տղա բերիս, անունն դիր Հոհանես:

Միերն ելավ գնաց արևելքի կռապաշտներու դեմ... Ինն ամսուց հետո Գոհարն բերեց մե տղա, անունը դրեց Հոհանես, իմալ որ Միերն եր ցանկացե: Հոհանեսը հոր նման գորեղ եր [25, 227]:

Ինչ վերաբերում է Օնան անվան դիցաբանական նշանակությանը, ապա այն աստվածաշնչյան արմատներ ունի: Օնանը հինկտակարանալին կերպար է, որ չի ցանկանում մահացած եղբորը սերունդ տալ և կենակցելով եղբոր կնոջ հետ՝ սերմը թափում է հատակին՝ արժանանալով աստծո պատժին:

Բնութագրական է, որ համանման մի գրույց է հիշատակում նաև Կեղծ Պլուտարքոսն իր «Գետերի մասին» գործում Միթրա-Միերի առնչությունամբ. «Միթրան, ցանկանալով ունենալ զավակ, բայց ատելություն տաճելով կանանց սեռի հանդեպ, բեղմնավորեց ինչ-որ ժայռ, որը հղիանալով նախատեսված ժամանակին ծնեց Դիորփոն անունով որդի: Արիանալով Դիորփոնը մարտահրավեր նետեց Արեսին, բայց սպանվեց մենամարտում և աստվածների կամքով վերածվեց համանուն սարի: Այն գտնվում է Հայաստանում՝ Արաքս գետի մոտ» [38, 326]: Ըստ ավանդության՝ Հայաստանն է համարվել Միթրա-Միիր-Միեր աստծո աստվածահայտնության (Էպիֆանիայի) վայրը:

Կ. Յունգը, անդրադառնալով Միիրի որդուն, նրան սեմական ձկնակերպ աստվածների մասնավոր դրսևորում է համարում, ինչպիսիք են Օանը (Օաննես), բաբելոնյան Նունը, Դագոնը, Ադոնիսը՝ նշելով, որ Լիկիայում պաշտում էին աստվածային ձուկ՝ Օրֆին կամ Դի-Օրֆին՝ Միթրայի որդուն և «սրբազան քարին», այսինքն՝ Կիբելային [36, 142]: Մեկ այլ ուսումնասիրության մեջ Յունգը նկատում է, որ Օաննես անունը թարգմանվում է Իրան անվան հետ ունեցած կապով, և բոլոր «աստվածածովագնացները» արևի խորհրդանիշի էությունն են, քանի որ կենդանակերպի այն հատվածը, որտեղ արևը ձմեռային արևադարձի ժամանակ նորից սկսում է իր տարեկան շրջանաձև «վազքը», ցուլ-ձուկն է՝ Այծեղ-

ջուրը: Արևը ցլի նման բարձրանում է ամենաբարձր լեռները, հետո իջնում է ջրի մեջ որպես ձուկ: Ձուկը երազում հաճախ է երևում իբրև չծնված երեխայի խորհրդանիշ: Իբրև թե երեխան մինչև իր ծնվելն ապրում է ջրում ինչպես ձուկ, և սուզվելով ծովը՝ արևը միաժամանակ դառնում է և՛ երեխա, և՛ ձուկ: Այդ պատճառով ձուկը համարվում է վերափոխման և վերածննդի խորհրդանիշ [38, 326]:

Միերի աներևույթ ներկայությունը վիպական ևս պատահական չպետք է համարել: Այն առասպելական արմատներ ունի: Ուշագրավ է, որ միթրայական գաղտնածիսությունների մեջ Միհրի ծննդյանը ներկա էին երեք հովիվներ, որոնց հետագայում սկսեցին անվանել «պահնորդներ» կամ «աներևույթ վարպետներ»: Միհրի ծննդյան առասպելում հովիվների երկրպագության դրվագն ուղղակիորեն առնչվում է Քրիստոսի ծննդյան և մոգերի երկրպագության առասպելին՝ ընդգծելով այս երկու կրոնածիսական ուսմունքների միջև եղած որոշ ընդհանրություններ: Բացի այդ՝ միհրական գաղտնածիսություններում բարձրաստիճան և ավագ ձևավածներին անվանում էին էպոպոսներ՝ հայեցողներ, քանի որ նրանք «տեսնում էին անտեսանելին» և «հաղորդակցվում» աստվածների հետ [21, 163]: Սրանք պատկանում էին այն անմահ էակներին, որոնք, ըստ Հեսիոդոսի, չեն մահանում, այլ շարունակում են ապրել հաջորդ դարերում: Հետևաբար գրողի մեկնաբանությունը, թե վիպական «մի էս՝ մի հերոս կա, որ բոլոր սերունդների հետ ապրում, ոչ մեռնում է, ոչ էլ ծերանում՝ ինչպես ժամանակը», սրա լավագույն վկայությունն է: Նկատելի են նաև խոսուն աղերսներ միհրապաշտ էպոպոսների և «Մասնա ծոեր» էպոսի անմահ հերոսների՝ Քեռի Թորոսի ու Ձենով Օհանի միջև: Մասնավորապես կարելի է նշել երկարակեցությունն ու Մասնա հերոսների խնամակալությունը:

Այսպիսով՝ վիպակի կերպարների անվանումների դիցաբանական ակունքների քննությունը ակնհայտ է դարձնում Փոքր Միեր-Օհան-Օսան առնչությունը: Օսանն ու Օհան-Միերը դիտվել են միևնույն դիցի տարբեր անվանումներ և անպտղության, կարճատև կյանքի ընդհանուր դիցաբանական իմաստով համարժեք դիցույթներ, որոնք տեքստում կարող են փոխարինել միմյանց՝ խորհրդանշելով, որ միևնույն դիցական ճակատագրի կրողներ են նաև Խեչոյի տոհմի «խելառները»:

«Խնկի ծառեր» վիպական դիցանունները ազգային հոգեբանական բնութագրի, էության ու ճակատագրի ցուցիչ են, որոնք նպաստում են ազգային ինքնության այս կամ այն բնորոշ առանձնահատկության ընդգծմանը, վերհանմանն ու վերարժևորմանը: Վիպակի կերպարները,

սակայն, անվան հետ մեկտեղ ժառանգել են նաև «Մասնա Ծոեր» էպոսի, հայ առասպելական ու վիպական հերոսների էության, վարքագծի որոշ հատկանիշներ: «Մասնա Ծոեր» էպոսի հերոսների պես ծուռ են. «Օնան, տեղով **ծուռ** եք, ինքներդ ձեր հերոսներին հարգել չգիտեք» [15, 141-142]: «Արշակ և Շապուհ» ժողովրդական ավանդազրույցից հայտնի սեփական հողի վրա համարձակ լինելու կենսափիլիսոփայության կրողն են. «Օնան, սրտոտ լինելու համար մարդ ոտքի տակ իր **սեփական հողը պիտի ունենա**» [15, 123] և այլն:

Վիպակի կերպարներին օժտելով հայ ժողովրդի դարավոր կենսափորձից ծնված ու ձևավորված, ազգային ժողովրդական գրականությամբ ավանդված և արքեստիպային դարձած հատկանիշներով՝ Լ. Խեչոյանը ոչ միայն վերակենդանացնում է հայոց նախնական աշխարհաճանաչողությունը, վերհանում ժողովրդի կեցության ամենախոր շերտերը՝ բացահայտելով ժողովրդական կենսափիլիսոփայության ակունքը, այլ նաև ցույց է տալիս այդ հատկանիշների՝ գենային հիշողությամբ սերնդեսերունդ փոխանցվելու հատկությունը:

Լ. Խեչոյանի ստեղծագործության մեջ դիցույթները փոխկապակցված են և ունեն փոխլրացնող նշանակություն: Օհան-Օնան դիցույթի հետ սերտորեն կապված է «Մև գիրք, ծանր բզեզ» վեպում պարբերաբար հիշատակվող բզեզի դիցույթը: Ըստ քարաբզեզի ծագման մասին պատմող մի լեգենդի՝ Օնանի սերմնաժայթքման կաթիլներից մեկը հարվածել է բզեզին, նրա անունն էր Սկրաբ [35]: «Զանգուլակներով՝ Կույր Անցորդը» հարցազրույցում, անդրադառնալով բզեզի դիցույթին, հեղինակը մեկնաբանում է. ««Ծանր բզեզ»՝ խոսքը փարավոնների բզեզի մասին է, որը նրանց համար հարստության, երջանկության, հզորության սիմվոլ էր: Մի փորձիր հիշել քո տեսած այն երկու կոյաբզեզներին, որոնք դաշտի հողոտ ճանապարհի վրա թրիքից կերտած կլոր գունդն են պտտեցնում, հենց դրանք էլ այն ժամանակ համարվում էին երկրագնդի պտույտը, անվտանգությունը ապահովողը՝ գլորելով առաջ պիտի տանեին հողագնդի հավերժությունը» [16, 185]: «Մև գիրք, ծանր բզեզ» վեպում բզեզի հիշատակությունը մշտապես նախորդում է տեղի ունենալիք աղետին: Այն գուժում է զինվորների մահը, թշնամու հերթական հարձակումը կամ գնդակոծումը, ռազմական տագնապ և այլն:

«Բսիդա և Օսիրիս» տրակտատում Կեղծ Պլուտարքոսը հիշատակում է քարաբզեզը որպես զինվորների խորհրդանիշ, քանի որ բզեզները չունեն լգեր, այլ միայն արուններ են [32]: Մեկ այլ աղբյուրում՝ Հորապոլոնի եգիպտական հիերոգլիֆների մեկնությանը նվիրված «Հիերոգլի-

Ֆիկա» աշխատության մեջ, քարաբզեզը ինքնաձևության, հոր, երկնքի, ամուսնու խորհրդանիշ է համարվել: Ինքնաձևությունն է խորհրդանշել, քանի որ, ըստ հնագույն պատկերացումների, բնածին է: Երբ արուն ցանկանում է սերունդ տալ, ցլի թրիքից ստանում է գնդաձև պատկեր, որը գլորում է իր հետևի վերջույթների օգնությամբ արևելքից արևմուտք՝ նայելով արևելքին, որպեսզի վերարտադրի երկնքի պատկերը: Այս գունդը թաղելով գետնի տակ՝ նա թողնում է այնտեղ **քսանութ օր**, որի ընթացքում լուսինը շրջապտույտ է կատարում կենդանակերպի նշաններով: **Քսանիններող** օրը գունդը նետում է ջուրը (իբրև թե այդ օրը տեղի են ունենում **արևի և լուսնի միությունը** և երկնքի ծնունդը): Երբ ջրի մեջ գունդը բացվում է, հայտնվում են բզեզները: Հայր և ամուսին խորհրդանշում է, որովհետև հնագույն պատկերացումների համաձայն՝ քարաբզեզը սերում է միայն հորից և իգական սեռ չի ունենում: Երկնքի խորհրդանիշ է համարվում, քանի որ ծնունդը տեղի է ունենում երկնքի պատկերով [44]:

Ասվածին ավելացնենք նաև, որ հունական կախարդական պապիրուսում (Papyri Graecae Magicae, PGM) պահպանվել է «Միթրայի պաշտամունքը» խորագրով ծիսական նշանակություն ունեցող տեքստ՝ կազմված մ. թ. 4-րդ դարի առաջին կեսին հին Եգիպտոսում: Այս արարողության օգնությամբ ենթադրվում է, որ հնարավոր է անցնել կեցության յոթ բարձրագույն հարթություններով և խոսել Միթրա-Միհրի հետ, անմահություն ստանալ: Ծեսի նկարագրությանը հետևում են քարաբզեզի կիրառման և հմայիլների պատրաստման ցուցումները, որտեղ նշվում է. «*Վերցրու տասներկու ճառագայթով արևային քարաբզեզ և գցիր այն խորը, փիրուզագույն գավաթի մեջ Նորալուսնի ժամանակ: Նույն տեղում լոտոմետրերի սերմերը մանրացրու և մեղրով պատրաստիր բլիթ: Նույն պահին կտեսնես, թե ինչպես նա (քարաբզեզը) կմոտենա ու կսկսի ուտել: Գուլ տալուն պես կմեռնի: Վերցնելով նրան՝ գցիր ցանկացած ապակյա տարայի մեջ, որ պարունակում է ամենալավ վարդի յուղը ցանկացած քանակությամբ, ինչքան կցանկանաս: Առանձին լցրու և հարթեցրու սուրբ ավազը՝ չխախտելով դրա մաքրությունը: Վրան մի անոթ դիր և յոթ օր շարունակ մինչև արևը կհասնի երկնքի մեջտեղը, արտասանիր բանաձևը...» [30]:*

Դժվար չէ կռահել, որ բզեզը ևս միհրապաշտական դիցաբանության դիցույթներից է և խորհրդանշում է զինվորին: Մյուս կողմից առասպելական բզեզի մասին հիշատակություններում նրա արարումը, ինչպես նաև կիրառումը անմահության ծեսում տեղի է ունենում **Արևի և Լուսնի**

միութեան՝ Նորայրունի ժամանակ, որ երբեմն ավարտվում է Արևի «մահով»՝ խավարմամբ (սրան կանդրադառնանք ստորև): «Մն գիրք, ծանր բզեզ» վեպում ևս բզեզի հիշատակումը որոշ դեպքերում ուղեկցվում է Արևի խավարման հիշատակմանը գուգահեռ՝ խորհրդանշելով ողբերգություն, մահ. «Մի ծանր բզեզ անցավ: **Արևի խավարման օրը** դարձյալ վախեցել էի մառախուղի մեջ իջած թանձր խավարից» [17, 53], «**Արևի խավարման օրը** դարձյալ վախեցել էի մառախուղի հետ իջած համատարած սևից... Մեր և ուղղաթիռների արանքում կրակից շիկացած, դողացող օդն է, նրա ակնթարթային բռնկման կուրացնող ճերմակից փլվում է հորիզոնը, հափշտակվում են ժայռերը, անհետանում է ճիգը, տիրապետում, կամքը: Մի ծանր բզեզ անցավ» [17, 57]: Բզեզի դիցույթը վեպում ևս զինվորների խորհրդանիշն է. կանխատեսում է նրանց վերահաս մահը, որ պատկերվում է առասպելաբանորեն՝ արևի խավարմամբ: Վերոնշյալ արտահայտության բազմակի կրկնությամբ գրողն ակնարկում է մեծ թվով զոհերի, կորուստների մասին:

Միթրա-Մհերի պաշտամունքը իրականացվում էր քարանձավներում՝ զարդարված Կենդանակերպի նշաններով: Մասնավորապես ուշադրության կենտրոնում էին ձմեռային ու ամառային արևադարձերի՝ Այծեղջյուրի ու Խեցգետնի նշանները: Սրանք երկնքից երկիր և երկրից երկինք տանող երկու դարպասներ էին համարվում: Պորփյուրի «Նիմֆերի քարանձավի մասին» գործում Խեցգետինը հոգիների մուտքի դարպասն էր, իսկ Այծեղջյուրը՝ մահկանացու աշխարհից նրանց հեռանալու [33]: Պլինիոս Ավագը «Բնական պատմություն» երկի մեջ նշում է. «Խեցգետնի համաստեղությունում երկու փոքր աստղեր կան, որոնք կոչվում են իշուկներ (Aselli): Դրանց միջև փոքր ամպ կա, որը կոչվում է Մսուր (Preasepio)» [12]: Մսուրը, ինչպես նկատված է, աստղերի կուտակումն է Խեցգետնի համաստեղությունում [21, 171]: Մսուրի առկայությունն էլ հիմք է դարձել, որ հնագույն պատկերացումների մեջ Խեցգետնի համաստեղությունը համարվի մարդարարման կենտրոն³: Անտոյ Ալիշանի հավաստմամբ պարսիկ ախտամուլները, ըստ Կենդանակերպի անունների, պեսպես հատկություններ են հարմարեցրել նրանց: Կենդանակերպերի տակ սահմանված էին երկրի աշխարհագրական մասերն ու ազգերը, և դրանցից «Խեցգետինն ձօնեալ է նահանգին Հայոց» [3, 141]:

³ Ըստ Միհրի ծննդյան առասպելի՝ վերջինս լույսաշխարհ է եկել՝ ճեղքելով ժայթը: Հիսուսի ծնունդը ևս տեղի է ունեցել քարայրում: Դուկաս ավետարանիչի վկայմամբ Քրիստոսը ծնվել է մսուրում, հենց այդ ժամանակ երկնքում երևում էր գիսաստղը՝ Մսուրի համաստեղությունում:

Խեցգետնի համաստեղությունը նույնացվում էր նաև Տիգրիս և Եփրատ գետերի հետ: Առջևի աստղերը խորհրդանշում էին Տիգրիսը, հետին աստղերը՝ Եփրատը [29, 189]: Ընդ որում Խեցգետնի համաստեղության պատկերանշանը ոչ միայն խեցգետինն էր, այլ նաև քարաբզեզը: Քարաբզեզի առասպելական արմատների քննությունը, սակայն, այսքանով չի ավարտվում:

«Մասնա Ծռեր» էպոսում հերոսները կրում են երկնքից իջած հոր խորհրդանշանը՝ Խաչ-Պատարագին:

«Թռչունի» խորհրդաբանությունը, որպես ընդհանուր հնդեվրոպական հավատամքային կարգուկանոններում գերագույն աստվածության հիմնական խորհրդանիշ, ներկա է բազմաթիվ պատումներում: «Թռչող Խաչ» կամ «Անգղ-թռչուն» համաստեղությունը մ. թ. ա. 2-րդ հազարամյակում Հայասա երկրի գերագույն աստվածության՝ պատերազմի և անդրաշխարհի աստծո՝ Ներգալ-Էրրայի խորհրդանիշն էր: Այն Եգիպտոսում փոխարինվել է տեղում գոյություն ունեցող խորհրդանիշներով՝ մայիսյան թռչող բզեզ (Hikē թռչուն) և սև կատու [5, 234]: Բնիկ հայերեն **հաւ** (թռչուն) բառը հնախոսական **auēi** բառից է և համանուն է **հաւ** (պապ, հոր հայրը) բառին (հնիւ. auo): Քրիստոնեության մեջ նույնպես հայր աստվածության խորհրդանիշը՝ որպես ՀՈԳԻ թռչունն է՝ աղավնին [5, 225]: Ըստ Հրաչյա Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի»՝ Օնան անունը եբրայերեն ծագում ունի և ստուգաբանվում է *աղավնի*: Ուշագրավ է, որ միհրապաշտության մեջ նվիրաբերության Հայր (Պատեր) կոչվող յոթերորդ աստիճանը անվանվել է նաև Արծիվ, Հավք (Hawks) [42, 133]: Պարզ է դառնում Օնան դիցանվան և բզեզի դիցույթի միջև եղած առասպելական փոխառնչությունը, ինչն էլ «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում նրանց համատեղ կիրառության հիմքն է դարձել:

Այսիսով՝ «Խնկի ծառեր» վիպակում Օհան-Օնան դիցանուններով ծածկագրված է Միթրա-Մհերը, որ Լ. Խեչոյանի ստեղծագործության մեջ առանցքային դեր ու նշանակություն ունի: Միհրապաշտական դիցաբանությունից է նաև ինքնածնության, հոր, ամուսնու, զինվորի խորհրդանիշ համարվող բզեզի դիցույթը: Այն «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում ևս հանդես է գալիս իբրև զինվորի խորհրդանիշ և կանխատեսում է նրանց վերահաս մահը: Եգիպտական աստղաբանության մեջ քարաբզեզը Խեցգետնի համաստեղության խորհրդանիշն էր, իսկ վերջինս համարվում էր հոգու արարման վայրը, մտուրը և պարսկական աստղաբաշխության մեջ ձոնվում էր հայոց աշխարհին: Բացի այդ՝ թաքնագիտական խորհրդապաշտության մեջ Անգղ-թռչունը և բզեզը գերագույն արական աստվածության խորհրդանիշներ են համարվել և խորհրդանշել են Հայասա երկրի

գերագույն աստվածության՝ պատերազմի և անդրաշխարհի աստված Ներգալ-Էրրային:

Լ. Խեչոյանը վերակենդանացնում է հայ ժողովրդի հոգևոր նկարագրի արմատական անփոփոխ գծերը, որ դարեր շարունակ հարատևել և ձևավորել են մեր ազգային դիմագիծը, վերաքննում է ու վերախմաստավորում դրանք՝ ընթերցողին մոտեցնելով ազգային ակունքներին, ճանաչել տալիս հայոց նախապատմական հեթանոսական շրջանի մշակույթը և նպաստում գրական ու մշակութային արժեքների պահպանմանը: Ասվածը փաստվում է նաև Հ. Թումանյանին նվիրված հրապարակախոսության մեջ Լ. Խեչոյանի խորիմաստ հարցադրմամբ. «Գուցե ամենաբարդ ասվածը մեր նախաստեղծ հայրենիքի՝ Հայասայի, Ուրարտուի, քրիստոնեական ժամանակներից եկող մշակույթից վերցրած ազգային մտածելակերպի խորհուրդը ժողովրդին վերադարձնելու մեջ է» [14]:

Լ. Խեչոյանի առասպելակիրառության հիմնական նպատակն ու էական առանձնահատկությունը վերադարձն է ազգային նախասկզբին, կեցության արմատներին՝ ներկայի վերախմաստավորման և ապագայի կանխորոշման միտումով:

Ըստ էության վերստին փաստվում է գրականագետների այն տեսակետը, որի համաձայն Լ. Խեչոյանի ստեղծագործությունը գենետիկորեն կապված է ազգային էպոսին, առասպելաբանությանն ու բանահյուսությանը: Ինչպես առասպելաբանահյուսական սերտ աղբյուրներով սկզբնավորվում է հեղինակի ստեղծագործությունը, նույն կերպ էլ ավարտվում է: Վկա հեղինակի վերջին գործը՝ «Մհերի դռան գիրքը» վեպը:

«Օրը շաբաթ է, լուսինը մեկ օրական» դիցույթը

Առասպելական այլասացությունը նպաստում է համամարդկային, համազգային խնդիրների և բարոյափիլիսոփայական գաղափարների արտահայտմանը: Լ. Խեչոյանի ստեղծագործության մեջ առասպելաբանահյուսական, ազգագրական նյութը ներհյուսվում է սյուժեին և ամբողջացնում երկի գաղափարական, գեղարվեստական հայեցակարգը: «Խնկի ծառեր» վիպակում հեղինակի առասպելակիրառության հիմնական օրինաչափությունը «փակ» դիցույթների կիրառությունն է, որի միջոցով վերախմաստավորում և վերակառուցում է միերյան առասպելը՝ ներհյուսելով տոհմի պատմությանը:

«Օրը շաբաթ է, լուսինը մեկ օրական» դիցական արտահայտության ցանկացած կրկնություն վիպակում գուժում է Խեչոյի տոհմի անդամներից մեկի մահը: Ի վերջո ուսուցիչ Նիզարը բացահայտում է տոհմի հետ կատարվող դժբախտությունների և այդ օրվա միջև եղած կապը. «Նրանց

տոհմի հետ այդ դեպքերը կատարվում են, երբ լուսինը մեկ օրական է դառնում, դա այն ժամանակն է, երբ լուսինը ձևով յաթաղանի է նմանվում... Նրանց տոհմի արյան ու սերմի մեջ շրջապտույտ է տալիս լուսինը՝ յաթաղանի տեսքով: Նրանց դեռ չծնված պտուղը իր մեջ ունի երգրի պատմությունը և գիտե, որ երկնքում կա մեկ օրական լուսին ու նրա փայլը շեղրի տեսք ունի: Փրկությունը լուսինը ջարդելու մեջ է» [15, 133]:

Վերոնշյալ դիցույթի դիցաբանական բովանդակության ուսումնասիրությունը սկսենք մեկ օրական լուսնի խորհրդաբանության մեկնաբանմամբ:

Հնագույն ժողովրդական պատկերացումներում Լուսինը, մասնավորապես Նորալուսինը փոփոխական ու չարագուշակ է համարվել: Սրա պատճառը Երկրի և Արևի միջև միջանկյալ դիրքն է, խավար, չլուսավորված կողմը և Արևի խավարումը: Եռօրյա շրջանը, որի ընթացքում Լուսինը Արեգակի և Երկրի միջև է, և Երկրին է ուղղվում նրա չլուսավորված մասը, կոչվում է Նորալուսին: Այլ կերպ ասած՝ Նորալուսինն աստղագիտական իրադարձություն է, որի ժամանակ Արևն ու Լուսինը միավորվում են Կենդանակերպի միևնույն նշանում: Երկրի և Արևի միջև միջանկյալ դիրք ունենալու պատճառով Լուսինը քրիստոնեական խորհրդաբանության մեջ համեմատվում էր աստվածամոր հետ, իսկ ալքիմիայում օգտագործվում էր որպես միջնորդության խորհրդանիշ և անվանվում էր՝ «հայկական քած» (եգ շուն, եգ գայլ) [39, 38]:

Լուսնի աղետավոր համարվելու պատճառ է եղել նաև Արևի խավարումը (Արևի խավարումը տեղի է ունենում Նորալուսնի (1-ից 3 օրական Լուսնի) ժամանակ): Ալքիմիկոսներն այն պատկերում էին որպես Արևի մահը մայր-սիրուհու՝ լուսին-օձի խայթոցից կամ խոցվելը Կուբիդոնի նետից [39, 37]: Լուսինն ու Արևը նաև ամուսնական զուգընկերներ են համարվել, որոնք միավորվում էին ամեն ամսվա 28-րդ օրը: Նորալուսինն ասոցացվում էր անվստահության և երդմնազանցության հետ, ուստի հաճախ այն համեմատվում էր օձի հետ, որ սողում է Արևին ընդառաջ և դառնում առասպելական արևի աստծո վաղաժամ մահվան պատճառ: Արևը խավարեցնող սև Նորալուսնի խորհրդանիշն էր կատաղած սև շունը: Ալքիմիական որոշ ուսումնասիրություններում վերքը նշանակում էր կատաղած շան կծած, որից հետո հերմաֆրոդիտ երեխան տառապում էր կատաղախտով (ջրվախության) [39, 37]:

Պարսկական աստղաբաշխական պատկերացումների համաձայն՝ Արևի և Լուսնի միավորումը՝ Նորալուսինը, վտանգավոր շրջան էր: Այն չար ուժերի դեմ կռվի յուրահատուկ ժամանակ էր, որի ընթացքում Միթրա-Մհերը հաղթում է ճակատագրի չար ուժերին խորհրդանշող

Գոչիհար դևին [27]: Միհրականության մեջ հայտնի ցլամարտի տեսարանը մեկնաբանելիս 3-րդ դարի ճարտասան, փիլիսոփա **Լակտանտիոսը** հիշատակում է, որ պարսիկները Արևին՝ Միթրային՝ որպես խավարումից տառապողի, խոնարհվում էին քարանձավում: Արևը պատկերվում էր առյուծի դեմքով և պարսկական հագուստով՝ երկու ձեռքով սեղմած ցլի եղջյուրները: Ըստ Լակտանտիոսի՝ հատուկ շեշտադրվել են եղջյուրները, որպեսզի կարելի լինի ուշադրությունը կենտրոնացնել Լուսնի վրա, այլ ոչ թե կենդանու [43, 37]: Յլամարտի հայտնի պատկերաքանդակների ձախ կողմում հաճախ պատկերվում է արև, իսկ աջ կողմում՝ լուսին: Ըստ Ռ. Բեկի՝ միհրականները ցլամարտի տեսարանը մեկնաբանել են որպես Արևի և Լուսնի հանդիպում: Արևն ու Լուսինը հանդիպում են միմյանց իրենց տների՝ Առյուծի և Խեցգետնի ծայրամասերում: Յլի սպանությունը հավասարաթեք էր Լուսնի ոչնչացմանը, քանի որ Յուրը համարվում էր Լուսնի ամենաբարձր կետը: Եթե ցլամարտում Միհրը խորհրդանշում է Արևը, իսկ ցուրը՝ Լուսինը, ապա նրանց հանդիպումը նշանակում էր Արևի և Լուսնի միավորում՝ Նորալուսին կամ «Արևի հաղթանակ» [41, 216], որն ամենամյա իրադարձություն էր: Երբեմն, սակայն, Լուսինն անցնում է Երկրի և Արևի միջով՝ առաջացնելով Արևի խավարում: Միհրականության մեջ Արևի խավարումն Առյուծում ամենավատ պարտությունն էր, որ Արևը կարող էր կրել, քանի որ այն նշանակում էր *Արևի մահն իր տանը* [41, 234]:

Ինչպես նկատում է Ա. Արմինը, հնագույն հայկական առասպելներում և «Սասնա Շոեր» էպոսում հայոց վիպական թշնամիները Բել, Շամիրամ, Սենեքերիմ, Մսրա Մելիք, աղերսվում են լուսնի աստվածության հետ⁴:

⁴ *Բել* (աքադ. «ՏԵՆ»: ԲԵԼ>ԲԱՀԱԼ>ԲԱՀԱՂ (պատկերն է՝ հորթ կամ ցուլ՝ պոզին լուսնի խորհրդանշանը), *Շամիրամ* (այս աստվածության անունն աղերսվում է հուն.՝ Semiramis, ասորերեն՝ sin-a-rah (փայլող լուսին) կամ [sem-i-] «ամբողջի կետը» և arma բարձրացող լուսին իմաստների հետ. ամենահավանական տարբերակը՝ «կիսալուսին»), *Սենեքերիմ* (ասր. անվ. Սիննահարիմ՝ sin-ah he-erba թարգմանվում է՝ Սին (Լուսնի աստվածը) եղբայրներս շատացրեց), *Մսրա Մելիք* (Մըսր>Մըսիր: Հնի. ձևն է՝ [*meH-s-] և [*me(H-n-[*meH]) երկուսն էլ բխում են [*meH] «չափման միավոր, ժամանակ», ամիս (հնում հիմնականում լուսնամիսն է եղել ժամանակի չափման միավոր, տարին՝ 360 օր): Սանսկրիտ՝ **mih**, **masa**, - «ամիս», «լուսին», Ավեստա՝ **ma**, հայեր.՝ **ամսոյ**, **ամիս**, **մահ+իկ**, **մահ**-«լուսին», «ամիս»: Մսրա Մելիքի գուրգը կամ «հողը» 360 լիտր էր կշռում, ի տարբերություն արևային տարվա՝ 365 օր, լուսնային, սխեմատիկ տարին՝ 360 օր էր համարվում) [5, 177]:

Արևապաշտ հայոց ազգի պայքարը լուսնապաշտների դեմ դժբախտաբար դուրս է եկել առասպելականի սահմանից՝ դառնալով հայ ազգի ճակատագիրը: Թուրքական յաթաղանի տեսք ունեցող լուսինը մշտապես հայոց արևապաշտ ազգի «խավարման» պատճառ է դարձել: «Խնկի ծառեր» վիպակում Նորալուսինն իր առասպելաբանահյուսական, չարագուշակ նշանակությամբ խորհրդանշում է 1915-ի արյունալի ցեղասպանությունն իրականացնողին. «Տատիս թվացել էր, թե թափառող, կրքերից իրար հոշոտող ոհմակը զորք է: Ոսկեծոպ մետաքսով զարդարված բերում են լուսինն, որ նա բռնաբարի կորեկի արտում հունձ անող մորը՝ խտտերի մեջ գատիկների հետ խաղացող վեց տարեկան քրոջը...» [15, 161]:

Շաբաթ օրը Սատուրն մոլորակի օրն է համարվել: Շաբաթվա օրերի թիվը համապատասխանում էր երկրից անգնն աչքով երևացող յոթ մոլորակների թվին: Մոլորակների հենց այս թիվն էր հայտնի հաղիներին, և հենց նրանք էլ շաբաթվա օրերն անվանեցին մոլորակների պատվին: Մոլորակների հաջորդականության և շաբաթվա օրերի հետ համապատասխանության քաղդեական ուսմունքը յուրացվեց բաբելոնացիների, եգիպտացիների, հրեաների կողմից: Իր տեղը գտավ նաև միհրականության մեջ: Հայտնի է, որ յուրաքանչյուր միհրական սահմանված ժամանակի ընթացքում պետք է անցներ նվիրաբերության յոթ աստիճաններով, որոնցից յուրաքանչյուրը գտնվում էր հատուկ մոլորակի հովանու ներքո⁵: Նվիրաբերության յոթ աստիճաններից ամենաբարձրը Հոր աստիճանն էր, որ Սատուրն մոլորակի հովանու ներքո էր: Սատուրնը թե՛ բաբելոնյան, թե՛ հունահռոմեական աստղաբաշխության մեջ հաճախ նույնացվել է Արևի հետ: Այն ընկալվել է որպես գիշերային արև, ստորերկրյա աշխարհի արև: Սատուրն-Արև նույնականացումը միհրականության մեջ ցույց է տալիս սկզբի ու վերջի նույնությունը, հավերժական վերադարձը: Սատուրնը, այսպիսով, գիշերվա և ստորերկրյա աշխարհի Արևն էր, և այս մոլորակի հետ բնականաբար նույնացվել է անդրաշխարհի տիրակալը [40, 86]: Միթրա-Միհրի ծննդյան պատկերաքանդակներում հաճախ պատկերվել է Սատուրնը՝ մորուքավոր ծերունի աստվածը, որ նախապես եղել է երկնքի և ջրերի աստվածություն [45, 285]: Յլամարտի տեսարանում Սատուրնն է տալիս մանգաղ-դանակը, որով Միհրը սպանում է ցլին:

Շումերաքաղական օրացույցում ձմռան ամիսները կապվում էին

⁵ Ագռավին համապատասխանում էր Մերկուրին, Ծպտյալին կամ Հարսին՝ Վեներան, Ռազմիկին՝ Մարսը, Առյուծին՝ Յուպիտերը, Պարսիկին՝ Մահիկը, Արևային ավետաբերին (Հելիոդոմոս) և Հորը՝ Սատուրնը [21, 157]:

ստորգետնյա թագավորության Ներգալ-Էրրա աստծո և պետության հիմնադիր հայրերի, ավագների, նախնիների՝ հանդերձյալ աշխարհից վերադարձի հետ: Հատկանշական է, որ հին ժամանակներում շաբաթ օրը նվիրված էր հատկապես սև աստծուն՝ հռոմեական Սատուրնին, հունական Քրոնոսին, հնդկական Շանիին, փռուզիական Սաբազիային [31]:

Սատուրնը դեկավարում է Այծեղջյուր համաստեղությունը: Այն ալքիմիական մեկնություններում անվանվել է «sol niger» (Սև Արև) և համարվել սատանայի բնակատեղի: Երբ Արևի և Լուսնի միավորումը՝ Նորալուսինը, համընկնում է շաբաթ օրվա հետ, հինդուիզմում տոնում են Շանի Ամավայսյան Նորալուսինը Սատուրնում, որը համարվում էր անբարենպաստ օր: Այդպիսի օրերին բացվում էին հանդերձյալ աշխարհի դռները, և հնարավորություն էր տրվում վերափոխելու վատ ճակատագիրը, քանի որ Սատուրնը ճակատագրի տիրակալն էր համարվում: Սա լավ օր էր սև մոգությունից, տոհմական անեծքից ազատվելու համար: Հայերի մոտ ևս շաբաթ օրը հանդերձյալ աշխարհի հետ հաղորդակցման, հարազատների հոգիների այցելության օր էր համարվում:

«Տարին հինգ անգամ՝ հինգ մեծ տոների հաջորդ օրը նշում են մեռելոց հիշատակը: Ինչպես իրանցիների մեջ ֆրավաշիները Համասպատմաիդայա տոնի ժամանակ այն աշխարհից երկիր են վերադառնում, այնպես էլ հայերի մեջ մեռելների հոգիները դեռ շաբաթ օրը՝ Նավակատիքին-տոնի նախօրեին երկնքից իջնում են երկիր: Նրանք կենում են իրենց գերեզմանների մոտակայքում կամ իրենց ազգականների բնակարաններում: Այդ նախօրեին նրանց հիշատակը պետք է նշվի խունկ ու մոմով: Խունկն ու մոմը համարվում են հոգիներին տրվող զոհաբերություն: **Խնկի անուշահոտությունը հաճելի է հոգիներին, որովհետև դրախտում աճում է ծառ խնկենին:** Նախնիները երեք օր են մնում երկրի վրա, իսկ երրորդ օրը՝ իրենց հետնորդներին օրհնելով, նորից թռչում են երկինք: Իսկ իրենց ազգականներից չհիշված հոգիներն անիծում են նրանց և տխուր հեռանում» [1, 27]:

Ինչպես նկատելի է, շաբաթ օրը հնագույն ժողովրդական պատկերացումների համաձայն եղել է նախնիների հոգիների դարձի, նրանց հիշատակի օր: Նույն առասպելաբանահյուսական իմաստով ու նշանակությամբ Լ. Խեչոյանի «Խնկի ծառեր» վիպակում Խեչոյի տոհմի սրի քաշված նախնիները վերամարմնավորվում են սերնդից սերունդ: Յուրաքանչյուր նոր սերունդ գենետիկ հիշողությամբ վերապրում է նախնիների ճակատագիրը, որ ազգային հիշողությամբ փոխանցվում է սերնդեսերունդ՝ վերամարմնավորվելով սերնդակիցների հիշողության մեջ պայքարելու,

դարավոր ցավի հաղթահարման կոչում. «Որտե՞ղ է իմ տոհմը, ինչպե՞ս թե չկա: Չէ՞ որ ես նրանց կրում եմ, ինչպես նրանք ինձ, այն ժամանակ՝ ամբարած իրենց ողնաշարերում, որպես տաք լավա փոխանցում էին սերնդից սերունդ: Փախցնում էին յաթաղանից յաթաղան, ոճիրից ծնունդ» [15, 16]:

Եզրակացություն

Այսպիսով՝ «Օրը շաբաթ է, լուսինը մեկ օրական» դիցույթի դիցաբանական բովանդակության մեկնաբանությունը հանգեցնում է հետևյալին՝

ա) «Խնկի ծառեր» վիպակում և հեղինակի ստեղծագործության մեջ եղած մի քանի դիցույթների (Օնան-Օհան դիցանուններ, ծանր բզեզ) փոխհարաբերությունը բացահայտում է դրանց՝ միհրապաշտական դիցաբանության հետ ունեցած աղերսները: Օհան-Օնան դիցանուններով ծածկագրված է Միթրա-Միերը: Միհրապաշտական դիցաբանության հետ աղերսներ ունի նաև զինվորի խորհրդանիշ համարվող բզեզի դիցույթը:

բ) Առասպելաժխական, աստղագիտական, աստղաբաշխական, ալքիմիական պատկերացումների համապատկերում «Օրը շաբաթ է, լուսինը մեկ օրական» դիցական արտահայտության առաջին բաղադրիչը շաբաթ օրը, հնագույն ժողովրդական պատկերացումների համաձայն եղել է հանդերձյալ աշխարհից նախնիների հոգիների դարձի օր: Ինչ վերաբերում է մեկ օրական լուսնին, ապա նրա չարագուշակ դիցաբանական իմաստը արևի խավարումն է, որ առասպելաբանորեն խորհրդանշում է արևապաշտ հայոց ազգի խավարումը թուրքական յաթաղանի տեսք ունեցող լուսնի պատճառով:

գ) «Խնկի ծառեր» վիպակում կիրառված առասպելական հիմք ունեցող դիցույթների կիրառությունը Խեչոյանին հաճախ օգնել է հիմնական ասելիքը տեղափոխել ենթատեքստ, խուսափել հրապարակախոսական արձակից և վիպակը դարձնել բազմաշերտ:

Գրականություն

1. Աբեղյան Ս., Երկեր, հատոր Է, Երևան, 1975, 602 էջ:
2. Աբրահամյան Ս., Կենսապատումը «անտեսանելի ներկայության» առեղծվածի համակարգում, Գարուն, 2000, հ. 5, 95 էջ:
3. Ալիշան Ղ., Հին հուստոք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1910, 557 էջ:
4. Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1942-1962, 3154 էջ:
5. Արմին Ա., Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ՝ «Սասնա ծռեր» էպոսը, հատոր 1, Լոս-Անջելես, 2007, 494 էջ:
6. Աբելյան Գ., Սարդազայլերի ժամանակը, <https://granish.org/werewolf-time/>, (հասանելի է 01.09.2022):
7. Ավետիսյան Ս., Լևոն Խեչոյանի արձակի թաքնագիտական շերտերը, <https://granish.org/levon-khechyoyani-ardzaky/>(հասանելի է 07.08.2022):
8. Բեքմեզյան Ա. Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակում, Երևան, 2007, 152 էջ:
9. Գաբրիելյան Կ., Սև-կապույտ-մշուշագույն լեռներ, Ստեփանակերտ, 2014, 207 էջ:
10. Գրիգորյան Վ., Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը, Երևան, 2019, 432 էջ:
11. Եփրեմյան Վ., Տեքստից ներս, տեքստից դուրս, Գարուն, 2004, հ. 6, 95 էջ:
12. Դանիելյան Է., Անանիա Շիրակացու բնափիլիսոփայական հայեցակարգը և հոգևոր աշխարհայացքը, 21-րդ Դար, թիվ 6 (58), 2014, http://www.noravank.am/upload/pdf/6.Eduard_Danielyan_21_DAR_06_2014.pdf (հասանելի է 05.08.2022):
13. Դրոզդա Ա., Անցում անդունդի վրայով, <https://hetq.am/hy/article/27272>, (հասանելի է 01.08.2022):
14. Խեչոյան Լ. Հովհաննես Թումանյանի հեռագիրը <https://www.levonkhechoian.com/> (հասանելի է 02.09.2022):
15. Խեչոյան Լ., Խնկի ծառեր, Երևան, 1991, 168 էջ:
16. Խեչոյան Լ., Պատմվածքներ, Երևան, 2013, 231 էջ:
17. Խեչոյան Լ., Սև գիրք, ծանր բզեզ, Երևան, 2017, 240 էջ:
18. Կովալ Յ., Խեչոյանական արձակի հզոր ուժը, <https://www.aravot.am/2013/03/14/214642/>,(հասանելի է 05.09.2022):
19. Կոտիկ Ի., Ի դեպ, երբ բացերը փակվում են, փակերը՝ բացվում, <https://www.grakantert.am/archives/3304> (հասանելի է 04.09.2022):

20. Կույավա Ժ., Ցավի մասին, որ հատիկի նման ծլել է մաշկի տակ, <https://hetq.am/hy/article/27272>, (հասանելի է 06.09.2022):
21. Մարգարյան Ե., Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմազենե, Հայաստան, Հոռո, Երևան, 2014, 277 էջ:
22. Յացենկո Ն., Չմոռանալ, այլ հնարավորություն տալ, որ կյանքը խոսի ստեղծագործության օգնությամբ, <https://hetq.am/hy/article/27272> (հասանելի է 04.09.2022):
23. Պաստուխ Բ., Տաք լույսը և «Խելացի տառապանքը», <https://granish.org/bogdan-pastux-article> (հասանելի է 03.09.2022):
24. Ռյաբչի Ի., Տոսեմի փորձություն, <https://granish.org/ivan-ryabchi/>, (հասանելի է 02.09.2022):
25. Սասնա Ծոեր, հ. ք, մասն յերկրորդ, Յերեվան, 1951, 1004 էջ:
26. Փիլոյան Վ., Ակնարկներ արդի հայ գրականության, Երևան, 2018, 407 էջ:
27. Глоб П. Митра- Бог света и разума, <http://astro.kh.ua/02/%d0%bc%d0%b8%d1%82%d1%80%d0%b0-%d0%b1%d0%be%d0%b3-%d1%81%d0%b2%d0%b5%d1%82%d0%b0-%d0%b8-%d1%80%d0%b0%d0%b7%d1%83%d0%bc%d0%b0-%d0%bf%d0%b0%d0%b2%d0%b5%d0%bb-%d0%b3%d0%bb%d0%be%d0%b1%d0%b0/6/> (հասանելի է 07.09.2022):
28. Емельянов В., Нипурский календарь и ранняя история Зодиака, Санкт-Петербург, 1999, 432с.
29. Литургия Митры, <https://teurgia.org/germetizm/277-liturgiya-mitry> (հասանելի է 07.09.2022):
30. Плутарх, Застольные беседы, книга IV, 6, <http://simposium.ru/ru/node/815> (հասանելի է 05.09.2022):
31. Плутарх, Об Исиде и Осирисе, <https://www.litmir.me/br/?b=121898&p=1>. (հասանելի է 01.09.2022):
32. Порфирий, О пещере нимф, <http://www.platonizm.ru/content/porfiriyo-peshchere-nimf> (հասանելի է 06.09.2022):
33. Холлис Дж. Мифологемы: Воплощения невидимого мира, <https://www.libfox.ru/418690-2-dzheyms-hollis-mifologemy.html#book> (հասանելի է 02.09.2022):
34. Черкесова Е, Символы Египта. Скарабей, <https://urok.1sept.ru/articles/596305> (հասանելի է 03.09.2022):
35. Юнг К., Эон. Исследования о символике самости, Москва, 2009, 340 с.

Мифологема “день - субботний, первый день луны” в повести Л. Хечояна «Ладанные деревья»

Айвазян Тина

Резюме

Ключевые слова: мифоним, мифическое выражение, Мгер Младший, мифологическое содержание, Сасунские Богатыри, звездочетство, фольклор

Мифологическая аллегория способствует выражению общечеловеческих, национальных проблем и нравственно-философских идей. Мифологические истоки прозы Левона Хечояна, ее тесная связь с древними верованиями и фольклором были заметны уже в повести «Ладанные деревья», в которой фольклорно-мифологический, этнографический материал вплетается в сюжет и дополняет идейную, художественную концепцию произведения. Таким образом, Л. Хечоян возрождает основополагающие бесценные черты духовного облика армянского народа, которые сохранялись на протяжении веков и сформировали наш национальный характер, пересматривает и переосмысливает их, приближая читателя к национальным истокам, воссоздает культуру армян языческого периода и способствует сохранению литературных и культурных ценностей. Иначе говоря, творчество Л. Хечояна генетически связано с национальным эпосом, мифологией и фольклором. Объектом исследования статьи является мифологема «день - субботний, первый день луны» в романе «Ладанные деревья».

Основной закономерностью в обращении Л. Хечояна к мифам является использование «закрытых» мифологем, поэтому мифологемы, составляющие фольклорно-мифологическую основу повести, нуждаются в дешифровке и всесторонних комментариях. В данной статье мифологема «день – субботний, первый день луны» была изучена нами во взаимосвязи с другими мифологемами как в повести «Ладанные деревья» так и в творчестве автора в целом (Оган-Онан, тяжелый жук), поскольку в творчестве Л. Хечояна мифы взаимосвязаны и имеют взаимодополняющее значение.

Нами также рассмотрены приведенные выше мифологемы в контексте фольклорно-мифологических, астрономических, астрологических и алхимических представлений с целью выявить их фольклорно-мифологическое происхождение и мифологическое значение.

При анализе мы руководствовались профессионально-аналитической методологией мифокритической герменевтики. В результате исследования мы пришли к следующему заключению: упомянутые мифологемы тесно

связаны с культом Митры. Мифонимами Оган-Онана закодирован Митра-Мгер, который имеет ключевое значение в творчестве Л. Хечояна. Мифологема жука, которая считается символом война, митраизму. В свете ритуально-мифологических, астрономических, астрологических и алхимических представлений первый компонент мифического выражения «день - субботний, первый день луны», т.е. суббота, по древним народным представлениям, была днем возвращения душ предков из потустороннего мира. Что касается однодневной луны, то ее мифологическое значение представлено в виде солнечного затмения, которая в митраизме самое губительное поражение Солнца, поскольку, с точки зрения астрологии, оно означает смерть Солнца в собственном доме. С помощью этих мифологем автор в романе реконструирует и переосмысливает миф о Мгере, вплетая его в историю армянского народа, иносказательно изображает борьбу армян-солнцеклонников против турок, поклоняющихся Луне и самое трагическое событие в истории армянского народа - Геноцид.

The Mythologem “The day is Saturday, the Moon is One Day” in L. Khechoyan’s “Trees of Incense” Novella

Ayvazyan Tina

Summary

Key words: *theonym, mythological expression, Pokr Mher, mythological content, Sasna Tsrer, astronomy, folklore*

Mythological paradox helps to express global, national problems and moral-philosophical ideas. The mythological source of Levon Khechoyan’s prose, its close connection with ancient beliefs and folklore were already noticeable in his collected works called “Trees of incense” and in his homonomic tale, which announced the beginning of his creative life and where the folklore-mythological and ethnographical material is plaited into the plot, and made the whole ideological and artistic concept of the work. The subject matter of the article is the mythologem “The day is Saturday, the Moon is one day” in the author’s “Trees of incense” tale.

When L. Khechoyan uses myths, the main regularity is the application of “closed” mythologems, thus the mythologems that form the folklore-mythological basis of the tale need to be revealed and thoroughly interpreted. In this article we have researched the concept of mythologem in the tale called “Trees of Incense” and also from the aspect of its interrelation with other

mythologems used in the author's other works (Ohan-Onan, heavy bug), as in L. Khechoyan's works the mythologems are interrelated and have complementary meaning. We have also examined the above mentioned mythologems within the framework of folklore-mythological, astronomical, alchemical ideas with the aim of revealing their mythological content, meaning and folklore-mythological origin.

In the result of our research we have come to the conclusion that above mentioned mythologems have close connection with Mithraismical mythology. Mitrah-Mher is in cipher with theonyms of Ohan-Onan, that has pivotal role and meaning in L. Khechoyan's work. The mythologem of bug, which is considered to be the symbol of a soldier also has connection with Mithraismical mythology. In the panorama of mythological, ritual, astronomical, alchemical ideas, the first component of the mythological expression "the day is Saturday, the Moon is one day", that is the Saturday, according to the ancient folk ideas has been the day of returning of the ancestors' souls from the next world. As to the one day Moon, its mythological meaning is the eclipse, which is considered to be the Sun's worst defeat in Mithraism, as from the astronomical aspect it means the death of the Sun in its home. Using these mythologems, the author rebuilds, gives a new meaning to the Mher mythology plaiting it into the history of Armenian people by mythological allegory.

Ներկայացվել է 15.10.2022 թ.

Գրախոսվել է 02.11.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.